ՆԱԽԱԳԱՀ Լ.ԵՎ.ՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Վեհափառ Տեր, ես ցանկանում եմ իմ, իմ իշխանության և մեր ողջ ժողովրդի անունից շնորհավորել Ձեզ այս պատվավոր և միաժամանակ չափազանց պատասխանատու ընտրության առթիվ: Ես համոզված եմ, որ մեր Եկեղեցին, Ազգային-Եկեղեցական Ժողովը կատարեց ճիշտ ընտրություն, և անգամ նրանք, ովքեր կասկածներ ունեին, վստահ եմ, որ շատ շուտով իրենք էլ կհամոզվեն դրանում: Վեհափառ Տեր, ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ողջ կարողությունն ու եռանդը, Ձեր ողջ հոգին կներդնեք Հայոց Եկեղեցու բարգավաճման և հայ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման գործին: Եվ ես, կարծում եմ, իրավունք ունեմ Ձեր անունից հավատալու, որ Դուք, որպես հայ ժողովրդի հոգևոր հովիվ, ես, որպես Հայաստանի նախագահ, ձեռք-ձեռքի տված պիտի մեր գլուխը մատաղ անենք այս ժողովրդին: